

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ «ՂԻԶԱՅՆ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ 2022Թ.  
ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ ԵՎ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

«ԳԾԱՆԿԱՐ»

Ստուգվում են դիմորդի գիտելիքները և կարողությունները գծանկարից՝ «նատյուրմորտ» քննական առաջադրանքի միջոցով.

Նատյուրմորտ.

• պարզ երկրաչափական մարմիններից (խորանարդ, բուրգ, գլան, կոն, բազմանիստ, գունդ) և կենցաղային որևէ փայլատ (փայլ չունեցող՝ կավ, մետաղ) առավելագույնը 4 իրից կազմված հորինվածք ծալքավոր կտորի ֆոնի վրա:

Պահանջվում է.

- առարկաների գրագետ կառուցում, նրանց համաչափությունների պահպանում և ծավալների ճիշտ պատկերում լույսի ու ստվերի միջոցով,
- հեռանկարի կանոնների օգնությամբ առարկաների և նրանց դիրքերի ճիշտ պատկերում տարածության մեջ,
- վերջնական մշակում, առարկաների, նյութերի տարբերակում, նյութականության ճիշտ պատկերում (գիպս, կավ, մետաղ), ընդհանուր պատկերի ճիշտ ներկայացում:

Անհրաժեշտ նյութերը.

Առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ է A2 չափի նկարչական սպիտակ թուղթ, 50սմx70սմ չափի պլանշետ, գծագրական սև մատիտներ (օրինակ՝ H, HB, B) և ռետին:

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 4 ժամ (240 րոպե), կազմակերպվում է 1 օրվա ընթացքում (ընդամիջմանը դիմորդները մնում են քննասենյակում):

ՔՆՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Գնահատումը կատարվում է 20 միավորանոց սանդղակով՝ ըստ հետևյալ բաղադրիչների.

1. հորինվածքի գրագետ տեղադրում A2 թղթի չափի մեջ՝ մինչև 5 միավոր,
2. կառուցողական մոտեցում, ծավալների տարածաձավալային պատկերում՝ մինչև 5 միավոր,
3. ծավալների տոնային ընկալում և նյութականության ստացում՝ մինչև 5 միավոր,
4. հորինվածքի եզրափակիչ մշակում (մանրամասների ընդհանրացում)՝ մինչև 5 միավոր:

#### «ԿՈՄՊՈԶԻՑԻԱ»

Քննական առաջադրանքի միջոցով ստուգվում են հարթության վրա մի քանի երկրաչափական ծավալային մարմիններով կոմպոզիցիա ստեղծելու (գուաշով կամ ջրաներկով, A3 ֆորմատի թղթի վրա) դիմորդի գիտելիքները և կարողությունները:

#### Կոմպոզիցիա.

- Երկրաչափական ծավալային մարմիններով (բուրգ, գունդ, պրիզմա, խորանարդ, կոն, քառանիստ) հորինվածք՝ գույների տոնային համադրությամբ:

#### Պահանջվում է.

- Մի քանի երկրաչափական ծավալային մարմինների ընտրություն, միմյանց նկատմամբ համադրելիություն՝ ըստ դրանց չափերի, ծավալների և տեսակների, կառուցողական մոտեցում և կոմպոզիցիայի գրագետ տեղադրում A3 չափի թղթում,
- կոմպոզիցիոն ստեղծագործական մտքի կիրառման առկայություն,
- կոմպոզիցիոն կառուցվածքի դինամիկայի (շարժում) առկայություն,
- գունային գրագետ համադրելիության առկայություն՝ տաք և սառը գույների կոնտրաստների, տոնային ճկուն անցումների կիրառում:

#### Անհրաժեշտ նյութերը.

Առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ է A3 չափի նկարչական սպիտակ թուղթ, 50սմx70սմ չափի պլանշետ, մատիտներ, ռետին, քանոն, կարկին, գուաշ, ջրաներկ, ներկապնակ, վրձիններ, ջրաման, կալկա:

#### Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 4 ժամ (240 րոպե), կազմակերպվում է 1 օրվա ընթացքում (ընդմիջմանը դիմորդները մնում են քննասենյակում):

## ՔՆՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Գնահատումը կատարվում է 20 միավորանոց սանդղակով՝ ըստ հետևյալ բաղադրիչների.

1. Երկրաչափական ծավալային մարմինների գրագետ համադրելիություն, կոմպոզիցիա ստեղծելու ստեղծագործական մտքի կիրառում՝ մինչև 5 միավոր,

2. Երկրաչափական ծավալային մարմիններով կոմպոզիցիոն հորինվածքի դինամիկ ամբողջացում (սկիզբ, հասունացում, ավարտ) մինչև 5 միավոր,

3. կոմպոզիցիոն հորինվածքում մարմինների չափերի ներդաշնակ համադրության առկայություն, գունային սահուն, հակադիր, կտրուկ անցումների տոնայնության արտացոլում՝ մինչև 5 միավոր,

4. Երկրաչափական ծավալային մարմինների հստակ սահմանազատման առկայություն՝ գույների տոների միջոցով՝ մինչև 5 միավոր:

ԵՊՀ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԶՅՈՒՂԻ «ԴԵՎՈՐԱՏԻՎ-ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍ» ԿՐԹԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԻ 2022Թ. ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

«ԳԾԱՆԿԱՐ»

Ստուգվում են դիմորդի գիտելիքները և կարողությունները գծանկարից՝ «նատյուրմորտ» քննական առաջադրանքի միջոցով.

Նատյուրմորտ.

• պարզ երկրաչափական մարմիններից (խորանարդ, բուրգ, գլան, կոն, բազմանիստ, գունդ) և կենցաղային որևէ փայլատ (փայլ չունեցող՝ կավ, մետաղ) առավելագույնը 4 իրից կազմված հորինվածք ծալքավոր կտորի ֆոնի վրա:

Պահանջվում է.

- առարկաների գրագետ կառուցում, նրանց համաչափությունների պահպանում և ծավալների ճիշտ պատկերում լույսի ու ստվերի միջոցով,
- հեռանկարի կանոնների օգնությամբ առարկաների և նրանց դիրքերի ճիշտ պատկերում տարածության մեջ,
- վերջնական մշակում, առարկաների, նյութերի տարբերակում, նյութականության ճիշտ պատկերում (գիպս, կավ, մետաղ), ընդհանուր պատկերի ճիշտ ներկայացում:

Անհրաժեշտ նյութերը.

Առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ է A2 չափի նկարչական սպիտակ թուղթ, 50սմx70սմ չափի պլանշետ, գծագրական սև մատիտներ (օրինակ՝ H, HB, B) և ռետին:

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 4 ժամ (240 րոպե), կազմակերպվում է 1 օրվա ընթացքում (ընդամիջմանը դիմորդները մնում են քննասենյակում):

ՔՆՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Գնահատումը կատարվում է 20 միավորանոց սանդղակով՝ ըստ հետևյալ բաղադրիչների.

1. հորինվածքի գրագետ տեղադրում A2 թղթի չափի մեջ՝ մինչև 5 միավոր,
2. կառուցողական մոտեցում, ծավալների տարածաձավալային պատկերում՝ մինչև 5 միավոր,
3. ծավալների տոնային ընկալում և նյութականության ստացում՝ մինչև 5 միավոր,
4. հորինվածքի եզրափակիչ մշակում (մանրամասների ընդհանրացում)՝ մինչև 5 միավոր:

#### «ԿՈՄՊՈԶԻՑԻԱ»

Քննական առաջադրանքի միջոցով ստուգվում են հարթության վրա մի քանի զարդանախշերի համադրությամբ զարդանախշային կոմպոզիցիա ստեղծելու (գուաշով կամ ջրաներկով, A3 ֆորմատի թղթի վրա) դիմորդի գիտելիքները և կարողությունները:

#### Կոմպոզիցիա.

- պարզ երկրաչափական, բուսական կամ կենդանական մարմիններից կառուցված զարդանախշային հորինվածք՝ դեկորատիվ մեկնաբանությամբ:

#### Պահանջվում է.

- զարդանախշերի գրագետ ընտրություն, միմյանց նկատմամբ համադրելիություն՝ ըստ դրանց չափերի, ծավալների և տեսակների, կառուցողական մոտեցում և կոմպոզիցիայի գրագետ տեղադրում A3 չափի թղթում,
- կոմպոզիցիայի ձևաստեղծման ստեղծագործական մտքի կիրառման առկայություն,
- կոմպոզիցիոն կառուցվածքի միջնադաշտի և եզրային գոտու զարդանախշային դասավորվածության հստակ սահմանազատման առկայություն,
- գունային գրագետ համադրելիության առկայություն՝ տաք և սառը գույների կոնտրաստների, տոնային ձկուն անցումների կիրառում :

#### Անհրաժեշտ նյութերը.

Առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ է A3 չափի նկարչական սպիտակ թուղթ, 50սմx70սմ չափի պլանշետ, գուաշ, ջրաներկ, ներկապնակ, վրձիններ, ջրաման, մատիտներ, ռետին, կալկա, քանոն, կարկին:

#### Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 4 ժամ (240 րոպե), կազմակերպվում է 1 օրվա ընթացքում (ընդմիջմանը դիմորդները մնում են քննասենյակում):

ՔՆՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Գնահատումը կատարվում է 20 միավորանոց սանդղակով՝ ըստ հետևյալ բաղադրիչների.

1. զարդանախշերի ընտրություն և գրագետ համադրելիություն, կոմպոզիցիա ստեղծելու ստեղծագործական մտքի կիրառում՝ մինչև 5 միավոր,

2. զարդանախշերով միջնադաշտի և եզրային գոտիների ստեղծում, դետալների՝ միմյանց նկատմամբ կոմպոզիցիոն աշխատանքի ամբողջացում՝ մինչև 5 միավոր,

3. կոմպոզիցիայում զարդանախշերի չափերի ներդաշնակ համադրության առկայություն, զարդանախշերի գունային սահուն, հակադիր, կտրուկ անցումների, տոնայնության արտացոլում՝ մինչև 5 միավոր,

4. զարդանախշերի հստակ սահմանազատման առկայություն գունային տոների միջոցով, տաք և սառը գույների համադրության առկայություն, ստեղծագործական մտքի առկայություն՝ մինչև 5 միավոր: